ԼՂԻՄ. ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՓՈՓՈԽ Է

Ստեփանակերտում աշխատանքային ռիթմը առաջվա պես չի վերականգնված: Գործադուլները շարունակելու կողմնակիցների գաղափարները դեռևս դրականորեն են ընկալվում արդյունաբերության ոլորտում աշխատողների մեծ մասի կողմից: Նրանց հիմնական փաստարկն այն է, որ անցած երեքուկես ամիսները առայժմ չեն հասցրել բնակչության պահանջներից բխող կոնկրետ արդյունքների:

Այդուհանդերձ, չի դադարում մարդկանց հետ տարվող բացատրական աշխատանքը, որի մեջ ամբողջությամբ ներգրավվել են Ազգային խորհրդի անդամները, կուսակցական, խորհրդային, արհմիութենական և կոմերիտական ակտիվիստները: Այսօրվա դրությամբ մասնակիորեն գործում են կենցաղային սպասարկման, հասարակական սննդի օբյեկտները, քաղաքային ավտոտրանսպորտը, շինարարական կազմակերպությունները: Լրիվ աշխատում են առևտրական ցանցի և կոլտնտեսային-խանութային հիմնարկների կոլեկտիվները: Մյուս ձեռնարկությունները, որոնք կապված չեն մարզի կենտրոնի բնակչության կենսապահովման հետ, կանգնած են:

Ինչպես Արմենպրեսի թղթակցին հաղորդեց ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության մամուլի կենտրոնի ներկայացուցիչ, մայոր Յուրի Օլեգովիչ Մակարովը, Լեռնային Ղարաբաղում օպերատիվ իրադրությունը մնում է լարված: Շրջափակված են ինքնավար մարզի մի շարք բնակավայրեր, դրանք կապող ճանապարհներին շարունակվում են ավտոտրանսպորտային միջոցների խարսխումները: Կան երկու ազգերի որոշ անձանց մոտից հրազենի ու զինամթերքի առգրավման փաստեր: Այդ գործողություններով զբաղված էին ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության աշխատակիցները և ներքին զորքերի զինծառայողները: Ճանապարհներին դրության սրման կապակցությամբ որոշում է ընդունված զինծառայողների միջոցով ավտոշարասյուների ուղեկցման մասին: Նրանց ցուցում է տրված ամենավճռական միջոցները ձեռնարկել հարձակումները կանխելու համար: Այդ միջոցները արդարացված են, քանի որ նման հակաիրավական ակտերի հետևանքով, որպես կանոն, տուժում են անմեղ մարդիկ, զգալի նյութական վնաս է պատճառվում ինչպես պետությանը, այնպես էլ քաղաքացիների անձնական ունեցվածքին:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ